ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳԼԻՊՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին տարիներս Արտաշատից, Գառնիից, Սիսիանից և այլ վայրերի հուշարձաններից հայտնաբերվել են հելլենիստական շրջանի քարե ու ապակե կնիքներ, որոնք իրենց վրայի պատկերներով և կատարման տեխնիկայով մեծ հետաքրքրություն են ներկայացնում տվյալ դարաշրջանի գլիպտիկայի ուսումնասիրության համար։

Բրգաձև, բազմանիստ քարե կնիքներ պատրաստվել են միայն Փոքր Ասիայում մ. թ. ա. V դ. վերջերին և IV դ.։ Այդ, այսպես կոչված «հունա-պարսկական»[1] կնիքների գեղարվեստական առանձնահատկությունների և պատրաստող վարպետների հարցը վաղուց է քննության առարկա դարձել և մինչև այժմ էլ մնում է մասնագետների ուշադրության կենտրոնում։ Մի շարք ուսումնասիրողներ գտնում են, որ դրանք ստեղծվել են տեղական, փոքրասիական ժողովուրդների կողմից, որոնք իրենց վրա կրել են հունական և պարսկական մշակույթի ազդեցությունը[2]։ «Հունա-պարսկական» կնիքների սիրված թեմաներն են՝ կենդանիները, հեծյալ մարտիկի և հետիոտնի կռիվը, հեծյալը վայրի կենդանիներ որսալիս և այլն։ Պատկերները կառուցված են ազատ կոմպոզիցիայով, անհամաչափ, գրանցում խորություն չի զգացվում, շարժումները պայմանական են և սխեմատիկ։

Նույն շրջանում Փոքր Ասիայում, բացի «արևելա-հոնիական» կամ «արևելա-հունական»[3] և «հունա-պարսկական» կնիքներից, պատրաստում էին նաև տեխնիկապես ավելի կոպիտ, գեղարվեստական պակաս վարպետությամբ կերտված, մասամբ ինքնուրույն ոճով, բայց հիմնականում «արևելա-հոնիականների» օրինակներով կնիքներ։ Դրանք տեղական այն ժողովուրդների գործերն էին, որոնք գտնվելով փոքրասիական վերոհիշյալ դպրոցների ազդեցության տակ, ավելի սերտորեն էին կապված տեղական ավանդույթների հետ։

---

[1] *Այս տերմինն առաջին անգամ օգտագործել է Ա. Ֆուրտվենգլերը, դրա տակ հասկանալով կնիքների հատուկ խումբ* (A. Furtwangler, Die antiken Gemmen, Geschichte der Steinschneidekunst im klassischen Altertum, III, Leipzig—Berlin, 1900, էջ 116—124).

[2] N. M. Nikoulina, La Glyptique „Grecque Orientale" et „Greco-perse", Antike Kunst, 14 jahrgang, 1971, Heft 2, էջ 90—103; Н. М. Никулина, К вопросу о „восточно-греческом» и «греко-персидском» искусстве (по материалам глиптики V—IV вв. до н. э.) («Вестник древней истории», 1969, № 3, стр. 106); В. В. Павлов, К вопросу с малоазийской глиптике, «Древний мир», Москва, 1962; *Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 1, էջ 271—277)։*

[3] *Փոքրասիական հույների պատրաստած կնիքների խումբ* (A. Furtwangler, *նշվ. աշխ., ծան. 1)։*

Հայաստանում հայտնաբերված[4] «հունա-պարսկական» և փոքրասիական քարե ու ապակե կնիքների թիվը հասնում է մոտ երկու տասնյակի (Գառնի, Դվին, Արտաշատ, Օշական և այլն), որը վկայում է մ. թ. ա. V—I դդ. այդ-օրինակ կնիքների լայն տարածումը։

Քարե կնիքները հիմնականում վերաբերվում են մ. թ. ա. V—IV դդ.։ Հելլենիստական շրջանում արդեն գերակշռում էին ապակե կնիքները, որոնք ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, քարե կնիքների ընդօրինակություններ են[5]։ Ապակյա կնիքներ վաղուց էին հայտնի, սակայն այս շրջանում դրանք ավելի լայն տարածում են ստանում[6]։ Ապակյա կնիքների տարածմանը խթանեց նաև պահանջարկի մեծացումը, որը պայմանավորված էր հասարակության շերտավորման ուժեղացմամբ։ Պատրաստման տեխնիկայի պարզեցումը հնարավորություն տվեց դժվար և շատ աշխատատար քարե կնիքները փոխարինել ավելի հեշտ ու մեծ թվով արտադրվող ապակյա կնիքներով։ Դրանք ձուլվում էին մոմի օգնությամբ, քարե կնիքից հանված կաղապարի մեջ, որից հետո վարպետը հղկելու միջոցով տալիս էր ցանկացած ձևը։ Աքեմենյան շրջանում շատ էր օգտագործվում կապույտ խալցեդոնը (լազուրիտ), որը պարսիկներից փոխ են առել նույնիսկ հույն վարպետները[7], ուստի ձուլող վարպետներն աշխատել են բազմանիստ կնիքներին տալ քարե օրինակի ձևն ու գույնը։ Խալցեդոնը տարածված էր Հայաստանում և օգտագործվում էր ոչ միայն կնիքներ, այլև անոթներ պատրաստելու համար (Արտաշատում գտնված աբամեերեն արձանագրությամբ պնակը և նման մեկ այլ պնակի բեկորը)։ Հելլենիստական շրջանում, ապակով ընդօրինակելիս, գույների ընտրության հարցում ավելի ազատ են եղել. գտնվել են մանուշակագույն, բաց կանաչավուն, կապտավուն ապակուց պատրաստված բազմանիստ, օվալաձև ու շրջանաձև կնիքներ։ Այս եղանակով պատրաստված կնիքներն ավելի էժան էին ու մատչելի։ Ուստի, պատահական չէ, որ դրանք ի հայտ են գալիս շարքային դամբարաններում։ Հիշյալ շրջանում այս կնիքներն ունեցել են ոչ միայն պրակտիկ, այսինքն՝ իրենց անձը հաստատող նշանակություն, այլև օգտագործվել են որպես զարդարանք։ Միայն դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ Գառնիի և Արտաշատի կնիքները գտնվել են կանացի և մանկական գերեզմաններում, ուլունքների շարանի մեջ, իսկ դամբարաններում հաճախ են հանդիպում կնիքների ձևով առանց պատկերի ուլունքներ։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մ. թ. ա. V—I դդ. կնիքներ պատրաստվում էին ոչ միայն բազմանիստ, տասանիստի ձևով, այլև ավանդական սրբարձեզի նման, որոնք իրենց ձվածիր տեսքով միայն հիշեցնում էին վերջինիս։ Սրանց վրայի պատկերները նույնն էին, ինչ որ բազմանիստներինը։

Գառնիի բազմանիստ կնիքներից մեկը (նկ. 1) գտնվել է ամրոցի ներսում,

---

[4] Ժ. Դ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 271—277։

[5] М. Максимова, Стеклянные многогранные печати, найденные на территории Грузии («Известия» Языка истории и материальной культуры Грузии АН ГССР, № 10, 1941, стр. 75, 88); М. Н. Лордкипанидзе, Геммы Гос. музея Грузии, III, 1961, Тбилиси, стр. 44—47; М. Н. Лордкипаниндзе, Иберийские копии с малоазийских гемм позднеахеменидского времени («Вестник» отделения общественных наук АН ГССР, № 6, 1963, стр. 134); Ժ. Դ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 275 և հտ.։

[6] A. Furtwangler, նշվ. աշխ., էջ 119, 135, 151 և այլուր։

[7] М. И. Максимова, Античные резные камни Эрмитажа, Л., 1926, стр. 52.

կարասային թաղման մեջ։ Այն ձուլված է կապույտ ապակուց և ունի կախելու համար արված անցք (երկարությունը՝ 1,8 սմ, լայնությունը՝ 1 սմ, բարձրությունը՝ 0,7—1 սմ, անցքի լայնությունը՝ 2 մմ)։ Նրա փորագրված մակերեսին պատկերված է ձիավորի մենամարտը հետիոտնի հետ։ Ձիավորը վեր բարձրացրած, հորիզոնական դիրքով բռնած նիզակը ուղղել է դեպի հետիոտնի գլուխը, ձին գտնվում է քառատրոփ վազքի («Вытянутого галопа») վիճակում, որը ցույց է տրված առջևի և հետևի ոտքերի գրեթե հորիզոնական դիրքով, հետիոտնը ձախ ձեռքում բռնած վահանը պարզել է դեպի ձիու գլուխը, իսկ աջ ձեռքի երկար նիզակով հարվածում է ձիավորի գլխին։

Պատկերն արված է շատ ընդհանուր գծերով, սխեմատիկ, իսկ շարժումը՝ պայմանական։ Ձիավորը և հետիոտնը գտնվում են նույն բարձրության վրա, մարդկանց հագուստները չեն երևում, միայն թեթևակիորեն նշմարվում են սրածայր գլխարկները։ Չեն նշմարվում նաև ձիու և մարդկանց մարմնի մասնամասները։

Հին աշխարհում ազնվականների հիմնական զբաղմունքը պատերազմն էր, իսկ խաղաղ ժամանակ՝ որսորդությունը։ Թշնամուն հաղթելը պատերազմում և մենամարտում համարվում էր հզորության և ուժի արտահայտություն։ Որսորդությունը նույնպես դիտվում էր ոչ միայն որպես զվարճություն, այլև քաջություն, հերոսություն ցուցաբերելու միջոց։ Դրա համար էլ նշանավոր ազնվականները, հաճախ, որսի ժամանակ մենակ էին դուրս գալիս ահարկու գազանների դեմ և սպանում նրանց։ Այս սովորությունները, որ նույնքան հարազատ էր Հայաստանին, որքան և մյուս երկրներին, դարեր շարունակ պահպանվում էին։ Հայ թագավորներն ու նախարարները ունեին իրենց որսավայրը և պահում էին որսի հատուկ շներ, բազեներ և այլ կենդանիներ։ Ուստի, թշնամու հետ մենամարտի և որսորդության դրվագներ պատկերելը երկար ժամանակ հայ արվեստագետ-վարպետների հիմնական թեման էր։ Այդպիսի տեսարաններ պատկերվել են ոչ միայն «հունա-պարսկական» և փոքրասիական կնիքների, այլև միտաղե առարկաների, դրամների, քարերի և այլ իրերի վրա[8]։ Նույն ոճով պատկերված թեմաների հանդիպում ենք հայկական վաղ միջնադարյան բարձրաքանդակներում[9]։

Հեծյալի մենամարտը հետիոտնի հետ պատկերող կնիք (թվագրվում է մ. թ. ա. V դ. երկրորդ կեսով)[10] հայտնաբերվել է Դվինում։ Այստեղ հեծյալի կողքից վազող շունը, կարծես, նույնպես հարձակվում է հետիոտնի վրա։

«Հունա-պարսկական» քարե կնիքներ փորագրող վարպետները, հույներից փոխ առնելով պատկերներն ազատ կոմպոզիցիայով կառուցելու եղանակը, չեն կարողացել ազատվել շարժումներն ու կեցվածքները պատկերելու սխեմատիկությունից։ Դրանք գրեթե միշտ տրված են պայմանականորեն։ Բավական սխեմատիկ են նաև Դվինի բազմանիստի պատկերները։

Մենամարտի տեսարան է պատկերված նաև Սիսիանի մ. թ. ա. II—Գ դդ., իշխանական դամբարանից գտնված գրեթե շրջանաձև (1,3×1,1 սմ), վերին մասով ուռուցիկ, սարդիոնե կնիքի վրա (նկ. 2)։ Այստեղ երկու հետիոտնը

---

[8] R. Ghirshman, Iran. Parthes et Sasanides, Paris, 1962, նկ. 122.

[9] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դարերում, Երևան, 1949, էջ 66 և հտ.։

[10] Ժ. Դ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 273 և հտ., նկ. 1։

միմյանց հետ կռվում են նիզակներով։ Կենտրոնում կանգնած մարդը, որն ավելի բարձրահասակ է, ձախ ոտքը դեպի առաջ է ծալել և լայն բացած նիզակով խոցել է թշնամու գլուխը։ Նա մորուքավոր է, մեծ քթով և գլխին ունի հարթ գդակ։ Սա, ըստ երևույթին, պարսիկ է։ Իսկ դիմացինը, որը նիզակն ուղղել է հակառակորդի փորին, սաղավարտով է, ավելի կարճահասակ, ամենայն հավանականությամբ հույն է։ Ի տարբերություն նման սյուժեով մյուս կնիքների, այստեղ, պարսիկի հետևում կանգնած է բերանը բացած, թաթով ինչ-որ բան բռնած արջ։ Ազատ կոմպոզիցիայով կառուցված այս կերպարները տրված են բավական լավ, համաչափությունը շատ չի խախտված և երևում են մանրամասներ։ Սիսիանի կնիքի զուգահեռները մեզ հայտնի չեն։ Վերջինս պատրաստված է «հունա-պարսկական» կնիքների ոճով, որակյալ վարպետի ձեռքով, որը լավատեղյակ է եղել այդ ժամանակաշրջանի գլիպտիկայի նվաճումներին։ Կատարման տեխնիկայով, պատկերների վերարտադրությամբ ավելի նման է մ. թ. ա. V—IV դդ. կնիքներին։ Ուստի, սրա պատրաստման ժամանակը պետք է ավելի վաղ համարել, քան նրա հետ գտնված մյուս նյութերինը։ Այն կարելի է վերագրել մ. թ. ա. IV—III դդ.։

Գառնիի ապակյա բազմանիստը իր ձևով ու կատարման տեխնիկայով, պատկերի սխեմատիկությամբ ավելի մոտ է «սիրիա-կապադովկյան» կնիքներին[11]։ Այդպիսի մի խալցեդոն-շափյուղայից պատրաստված կնիք գտնվում է Բեռլինի թանգարանում[12], որը թվագրվում է V դ. վերջով և IV դ. առաջին կեսով։

Գառնիի բազմանիստի պատկերին խիստ նման է Ադրբեջանի պատմության թանգարանում պահվող կիսաթափանցիկ, խալցեդոն-շափյուղայից պատրաստված ձվաձև կնիքի պատկերը, որի կերպարներն ավելի կանոնավոր են (գրչանկար լինելու հանգամանքը հնարավորություն չի տալիս լավ պատկերացում կազմելու նրա մասին)։ Ըստ է. Ա. Պախոմովի, հետիոտնի ձեռքում, գլխից վեր, հորիզոնական դիրքով հարվածելու պատրաստ պահած զենքը երկարաբուր է, որը, սակայն, քիչ հավանական է, որովհետև սրով հնարավոր չէ նիզակի նման, հորիզոնական վիճակով մենամարտել։ Հավանաբար, հետիոտնի ձեռքինը նիզակ է և կնիքի ձվաձևության պատճառով պոչը չի երևում։ Այն թվագրվում է ուշ հելլենիստական շրջանով[13]։

Գառնիի կնիքը ևս, իր հետ գտնված ականջօղերով, ներճկված մեջքով ապարանջանով և մյուս նյութերով, պատկանում է մ. թ. ա. II—I դդ. և ընդօրինակվել է տեղական քարե կնիքից։

Գառնիի մյուս բազմանիստի վրա (դամբ. № 121) պատկերված է որսի տեսարան՝ մարդու մենամարտը առյուծի հետ (երկարությունը՝ 1,5 սմ, լայնությունը՝ 1,1 սմ)։ Մարդը նիզակով փորձում է հուժկու հարված հասցնել ետևի ոտքերի վրա կանգնած գազանի բաց երախին։ Վերջինս առջևի թաթերով կասեցնում է այն (նկ. 3)։ Լարված պայքարը ցույց տալու և առյուծի ճնշմանը դիմա-

---

11 Տարածքային առումով այստեղ հասկացվում էր Սիրիան, Կապադովկիան և Հայաստանը (Н. М. Никулина, նշվ. աշխ., էջ 119, ծան. 48)։

12 A. Furtwängler, Beschreibung der Geschittenen Steine in Antiquarium, Berlin, 1896, 19, № 185.

13 Е. А. Пахомов, Доисламские печати и резные камни Музея истории Азербайджана («Материальная культура Азербайджана», I, Баку, 1949, стр. 104, рис. 1/58).

1
2
3
4
5
6

գրավելու համար վարպետը մարդու ոտքերը պատկերել է լայն բացված, իսկ ձեռքերը՝ նիզակի երկու ծայրերից բռնած։ Մարդը կանգնած է մեջքով, ուստի երևում է նրա դեմքի մի փոքր մասը, նա գլխաբաց է, մազերը ետևի մասում հավաքած։ Պատկերը կառուցված է ազատ կոմպոզիցիայով, և՛ առյուծը, և՛ մարդը փորագրված են ուռուցիկ ակոսների միջոցով։ Չնայած համաչափությունը բավական պահպանված է, սակայն մանրամասներ բոլորովին չկան. մարդու ոտքերի թաթերը և առյուծի ետևի ոտքերի կեսը չեն երևում, շարժում չի զգացվում, կերպարները քարացած են։

Որսի տեսարանով մի կնիք էլ հայտնի է Արտաշատի Շիրազ գյուղի դամբարաններից (դամբ. № 28)։ Կարասային թաղման մեջ գտնված ապակյա, գրեթե շրջանաձև (1,3×1,5 սմ) կնիքի վրա պատկերված է մարդու մենամարտը վարազի հետ։ Կենդանին, ետևի ոտքերի վրա բարձրացած, առջևի ոտքերը պարկել է դեպի մարդը (նկ. 4), իսկ վերջինս (մարդու հետևի կեսը վնասված է) ձեռքի սուրն ուղղել է դեպի խոզի դունչը։ Մարդը մորուքավոր է, աջ ոտքը դեպի առաջ ծալած։ Վարազի մարմինը պրկված է, եռանկյունաձև դունչը աղեղնաձև գծով անջատված, թեմայով և կատարման եղանակով Գառնիի կնիքին նման (առյուծի որսի տեսարանով) բազմանիստ հայտնի է նաև Վրաստանի Մցխեթա-Սամթավրոյից (երկարությունը՝ 18 մմ, լայնությունը՝ 12 մմ, հաստությունը՝ 7 մմ) և թվագրվում է մ. թ. ա. V—IV դդ.[14]։

Հետաքրքիր է, որ II—I դդ. է պատկանում նաև Շիրազ գյուղի դամբարանի կնիքը։ Այս կնիքների ձևերն ու պատկերների կատարումը կասկած չեն հարուցում նրանց տեղական, փոքրասիական քարե կնիքներից ընդօրինակված լինելը։

Առյուծի հետ պայքարի տեսարաններ հանդիպում են նաև վաղ միջնադարյան բարձրաքանդակներում և սասանյան շրջանի մետաղյա անոթների վրա։ Պտղնիի եկեղեցու հարավային մուտքի վերևի կամարի հորիզոնական մասի ձախ կողմում քանդակված է մի հեծյալ որսորդ, որը սրարշավ առաջ է նետվում դեպի դիմացի առյուծը[15]։ Սրա պատկերման ոճը շատ նման է վերոհիշյալ կնիքներին։ Ձիու սրընթաց, քառատրոփ վազքը ցույց է տրված առջևի և ետևի ոտքերի գրեթե հորիզոնական վիճակով, ինչը բնորոշ է փոքրասիական կնիքներին։ Պտղնիում (VI դ.) և Ձվարթնոցում (VII դ.) հանդիպում են նաև քանդակներ, որոնք պատկերում են հետիոտնի պայքարը առյուծի հետ։ Մի դեպքում մարդը նիզակն ուղղել է առյուծի կրծքին, մյուսում, ըստ երևույթին, հարվածում է գլխին[16]։

Աղցի արշակունիների դամբարանի (IV դ.) վրա պատկերված է վարազի որսի տեսարան, որը հիշեցնում է Շիրազի դամբարանում գտնված կնիքի պատկերը[17]։

«Հունա-պարսկական» և փոքրասիական խմբերի ազդեցությամբ է պատրաստված նաև Գառնիի կարասային թաղումից գտնված մանուշակագույն ապակուց, ձվաձև, հարթ մակերեսով, գրեթե տափակ կնիքը (դամբ. № 114)։

---

14 М. И. Максимова, Стеклянные многогранные печати, найденные на территории Грузии, стр. 81, рис. 4; М. Лордкипанидзе, Корпус памятников глиптики древней Грузии, I, Тбилиси, 1969, стр. 105, рис. 76.

15 Բ. Ն. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 67, նկ. 45։

16 Նույն տեղում, էջ 68—69, նկ. 46, 47։

17 Նույն տեղում, էջ 78, նկ. 60։

նրա վրա շատ ընդհանուր ձևով պատկերված է բերանը բաց քայլող առյուծ (2,6×1,8 սմ)։ Այստեղ ընդհանրապես մանրամասներ (աչքեր, ականջներ և այլն) չեն տրված։ Բաց վիճակում գտնվող ոտքերի ծայրերը ձուլվելով մակերեսի հետ կորչում են, իսկ պոչը բացակայում է (նկ. 5)։ Նույն ոճով պատրաստված ապակյա ձվաձև մի կնիք հայտնի է Ադրբեջանի կարասային թաղումներից, որտեղ պատկերված է շուն[18]։

Գառնիի կնիքի պատկերի սխեմատիկությունը, անկենդանությունը և ոճական մյուս առանձնահատկությունները վկայում են նրա տեղական քարե կնիքից ընդօրինակվելը։ Այն թվագրվում է մ. թ. ա. II—I դդ., սակայն ավելի հավանականը մ. թ. ա. I դարն է։ Այդ թվագրմանը չեն հակասում նաև նրա հետ գտնված ուլունքները, երկաթյա տափակ վահանով մատանին և պղնձյա զանգակը։

Վերը նշեցինք, որ կենդանիներ միասին կամ առանձին պատկերելը հատուկ է «հունա-պարսկական», «արևելա-հունական», փոքրասիական կնիքներին և նրանց տարատեսակներին։ Հայաստանում հայտնաբերվել են մի շարք կենդանիների (մեջքին թռչուն կանգնած եղջերվի ու ձիու, իրար մոտ կանգնած ձիերի, թաթը եղջերվի մեջքին դրած առյուծի[19], արջի[20] և այլն) պատկերներով մ. թ. ա. V—I դդ. պատկանող կնիքներ։

Արտաշատում հայտնաբերված մ. թ. ա. II—I դդ. կապույտ ապակուց պատրաստված բազմանիստի վրա (երկարությունը՝ 1,8 սմ, լայնությունը՝ 1 սմ), շատ ընդհանուր ձևերով պատկերված է ձի՝ քուռակի հետ միասին (նկ. 6)։ Փորագրող վարպետը քուռակին ձիու տակ տեղավորելու նպատակով, նրա իրանը ներկայացրել է ձգված, առջևի և ետևի ոտքերը բաց։ Ձիու դունչը, պոչը և ոտքերի կեսը չեն նկատվում։ Պատկերը անկենդան է, քարացած։

Կապույտ ապակուց պատրաստված այդպիսի պատկերով մի բազմանիստ հայտնաբերվել է Վրաստանում և թվագրվում է մ. թ. ա. III դ.[21]։ Ձևի, չափերի, պատկերի կատարման նույնությունը խոսում է նրանց նույն խմբի և, հնարավոր է, նույն քարե կնիքի ընդօրինակություն լինելու մասին։

Կենդանիների և թռչունների պատկերների փորագրությունը շարունակվում էր նաև առաջին դարերում և հատկապես սասանյան շրջանի կնիքների վրա, այն տարածված է նաև Հայաստանի վաղ միջնադարյան և միջնադարյան բարձրաքանդակներում։ Այս ամենը վկայում են հնուց եկող ավանդների կենսունակությունը, նրանց հետագա շարունակումն ու զարգացումը։

Հայաստանի և Ադրբեջանի հելլենիստական շրջանի կնիքները պատկանում են նույն դպրոցին, ինչ որ Վրաստանինը, երբեմն էլ ընդօրինակված են նույն քարե կնիքից, ուստի Վրաստանի մ. թ. ա. V—IV դդ. թվագրվող կնիքների մի մասը անպայմանորեն վերաբերվում է հելլենիստական շրջանին։

---

18 С. М. Казнев, Альбом кувшинных погребений, Баку, 1960, таб. XLIV, 6; Т. И. Голубкина, М. М. Расулова, О связях древних кавказских албанцев со странами Древнего мира (по материалам кувшинных погребений Азербайджана) («Ученые записки». Серия ист. и философ. наук, Баку, 1966, стр. 77, рис. II, 8).

19 Ժ. Դ. Խաչատրյան, նշվ. աշխ., նկ. 2, 3, 4, 5։

20 М. Н. Лордкипанидзе, Геммы Гос. музея Грузии, IV, каталог, Тбилиси, 1967, табл. I, 2.

21 М. Н. Лордкипанидзе, Геммы Гос. музея Грузии, III, каталог, Тбилиси, 1961, таб. 49.

Հայաստանի, Վրաստանի[22] և Ադրբեջանի[23] բազմանիստ, էլիպսաձև (սրբրաբղեզի նման) և շրջանաձև, վերին մասում քիչ ուռուցիկ կնիքները «հունա-պարսկական» և փոքրասիական կնիքների հետ ունեցած իրենց ընդհանրություններով հանդերձ ինքնատիպ են, նրանց վրա խիստ զգացվում են տեղական ավանդույթները, ունեն շատ ինքնուրույն գծեր, որոնք և հնարավորություն են տալիս վերջիններիս համարել նրանց տարատեսակները[24]։

«Հունա-պարսկական» և փոքրասիական կնիքների հետ անդրկովկասյան խումբը կապված է պատրաստման նյութով (հիմնականում կապույտ խալցեդոն), թեմաների և ձևերի նմանությամբ։ Ինչ վերաբերվում է քարե կնիքներին, ապա Հայաստանը վաղուց ի վեր հայտնի էր իր թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով, որոնք դեռ Տիգրան Երկրորդի ժամանակ (մ. թ. ա. 95—55 թթ.) արտահանվում էին։ Նրանցով պատրաստում էին կնիքներ[25], զարդարում զանազան իրեր, մատանիներ, ականջօղեր, ապարանջաններ, կրծքազարդեր և այլն։

Հայաստանում շատ էին տարածված լազուրիտե, ագաթե, սարդիոնե զարդերն ու կնիքները։ Մ. թ. ա. V—I դդ. այդպիսի կնիքներ հայտնաբերվել են Դվինից, Սիսիանից և այլ վայրերից։

Հելլենիստական շրջանի բազմանիստ և այլ ձևի կնիքները ավելի ազատ են նյութերի ընտրության հարցում։ Հաճախակի հանդիպող քարերից է սարդիոնը, իսկ ապակե կնիքները տարբեր գույների են՝ մանուշակագույն, կապույտ, կապտականաչավուն, բաց կանաչավուն։

Թեմաների և ձևերի նմանությունը նույն միջավայրի ազդեցության արդյունք է։ Թեմաները նույնությամբ չեն կրկնվում, դրանք երբեմն բոլորովին ինքնուրույն են, կամ ինչ-որ լրացուցիչ երանգով տարբեր։ Կատարման եղանակը ևս տարբեր է, այստեղ բացակայում են «արևելա-հունական», «հունա-պարսկական» և նույնիսկ փոքրասիական կնիքներին բնորոշ, այսպես կոչված, շրջանաձև փոսիկները (круглого сверла-рундперля)։ Անդրկովկասյան խումբում ուժեղ են արտահայտված պատկերներ վերարտադրելու (ժայռապատկերների, գոտիների և հին շրջանի կնիքների վրա հանդիպող) տեղական, ավանդական ձևերը։ Այստեղ պատկերներն անհամաչափ են, երբեմն ուռուցիկ, երկար փոսիկներով կամ մի երկու գծով արված, կամ էլ պատկերի մի մասը մյուսի համեմատությամբ ավելի հյութեղ է, շեշտված։

Քննությունը ցույց է տալիս, որ Հայաստանում, մ. թ. ա. V—I դդ., գոյություն է ունեցել գլիպտիկայի երեք ուղղություն. ա) զուտ տեղական, որը չի ենթարկվել ոչ մի ազդեցության և բրոնզի ու երկաթի լայն տարածման շրջանից եկող ավանդական ուղղության շարունակությունն էր, բ) «հունա-պարսկական», որի պատրաստող վարպետները լավատեղյակ էին պարսկական ու հունական այդ շրջանի գլիպտիկայի նվաճումներին, աշխատում էին նմանվել նրանց, ավելի քիչ էին կաշկանդված տեղական ավանդույթներով և կատարում

22 М. И. Максимова, նշվ. աշխ.; М. Н. Лордкипанидзе, նշվ. աշխ.։

23 И. А. Бабаев. О трех стеклянных многогранных печатях, найденных в Мингечауре («Археологические исследования в Азербайджане». Баку. 1965. стр. 128—133. рис. 1—3).

24 М. И. Максимова, նշվ. աշխ., էջ 88 և հտ.; Н. М. Никулина, նշվ. աշխ., էջ 119։

25 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 225։

էին հիմնականում վերնախավի պատվերները, գ) փոքրասիական-անդրկովկասյան, որը կրել է «հունա-պարսկական» և փոքրասիական գլիպտիկայի ազդեցությունը, սակայն աշխատել է հարմարվել տեղական ավանդույթներին։

Հայաստանում և Վրաստանում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ Անդրկովկասում այդ կնիքները փորագրելու և ընդօրինակելու մի քանի կենտրոններ են եղել։ Մեր կարծիքով, դրանց նշանակալից մասը գտնվելիս է եղել Հայաստանում, որը ավելի սերտ կապերի մեջ էր Պարսկաստանի և փոքրասիական երկրների հետ։ Մ. թ. ա. V—IV դդ. վարպետները աշխատում են ընդօրինակել ներմուծված այդպիսի կնիքները, իսկ հետագայում արդեն ինքնուրույն էին աշխատում և շոսկան հիմնականում բավարարվում էր տեղական արտադրությամբ։ Այդ կնիքներով կարելի է գաղափար կազմել հայերի, պարսիկների և փոքրասիական մթուս ժողովուրդների կյանքի ու կենցաղի, նրանց նախասիրությունների, զբաղմունքի, հանդերձանքի, սիրված կենդանիների (կենդանական աշխարհի) մասին։ Դրանց լայն տարածումը բացահայտում է հին աշխարհի երկրների ու ժողովուրդների առևտրական կապերը, մշակութային փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները, որոնց մեջ կարևոր դեր է կատարել նաև Հայաստանը։

ЗАМЕЧАНИЯ О ГЛИПТИКЕ АРМЕНИИ ЭЛЛИНИСТИЧЕСКОГО ПЕРИОДА

Ж. Д. ХАЧАТРЯН

Резюме

В последние годы в Арташате, Гарни, Сисиане были обнаружены многогранные и овальные печати из камня и стекла, имеющие большое значение в изучении вопросов развития глиптики эллинистического периода.

Около двух десятков стеклянных и каменных печатей «греко-персидского» и малоазийского стиля, выявленных в Армении, говорят об их большой распространенности на территории последней. Все печати, за исключением сисианской, которая может быть отнесена к IV—III вв. до н. э., датируются II—I вв. до н. э.

Многогранные, эллипсовидные и круглые печати, найденные в Армении, Грузии, Азербайджане, наряду с «греко-персидскими» и малоазийскими примерами, несмотря на заметную общность, отличаются своеобразием, в котором проявляется местная традиция.

В Армении существовали 3 направления глиптики: а) исконно местное, которое являлось продолжением древних традиционных форм; б) «греко-персидское», представители которого обнаруживают большую осведомленность в области достижений греческой и персидской глиптики, и искусство мастеров этого направления менее сковано местными традициями; г) малоазийско-закавказское , где проявляется влияние «греко-персидской» и малоазийской глиптики и сочетаются наряду с местными традициями элементы греческого, персидского и малоазийского искусств.